Հաստատված է
«ՀԱՅԷԿՈՆՈԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության 04.10.2024թ.-ի
թիվ 192/01-04.10.24 որոշման Հավելված 1-ով

Վարչության նախագահ
Ա. Առաքելյան

Ուժի մեջ է մտել 04.10.2024թ.

AEB REWARDS ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 2024

Հիմնական հասկացություններ

«Բանկ»՝ «ՀԱՅԷԿՈՆՈԲԱՆԿ» ԲԲԸ (գտնվելու վայրը՝ ք. Երևան,Ամիրյան 23/1)

«AEB Rewards ծրագիր» (այսուհետ՝ Ծրագիր)՝ Բանկի և հաճախորդի միջև շարունակական համագործակցության ապահովման նպատակով առաջարկ, որին հաճախորդի կողմից համաձայնություն տալու դեպքում՝ Բանկը հաճախորդին մատուցվող բանկային ծառայությունների դիմաց հաճախորդին տրամադրում է My Rewards միավորներ, զեղչեր և/կամ արտոնություններ Ծրագրով սահմանված կարգով և պայմաններով:

«My Rewards միավորներ»՝ պայմանական միավորներ, որոնք Բանկի կողմից հաշվարկվում և հաշվեգրվում են Մասնակցի AEB Rewards հաշվին՝ վերջինիս կատարած անկանխիկ գործարքների դիմաց՝ Ծրագրի պայմանների համաձայն:

«AEB Rewards հաշիվ»՝ Բանկի կողմից վարվող պայմանական հաշիվ, որում հաշվառվում են հօգուտ մասնակցի հաշվեգրված և/կամ նվազեցված My Rewards միավորները: Յուրաքանչյուր Մասնակից ունենում է ընդհանրացված մեկ AEB Rewards հաշիվ: AEB Rewards հաշիվը չի հանդիսանում բանկային հաշիվ:

«Մասնակից»՝ Բանկի քարտապան հանդիսացող ֆիզիկական անձ, ով տրամադրում է Բանկին համաձայնություն մասնակցելու Ծրագրին:

«Քարտապան»՝ Բանկի այն քարտապանը, ով ունի Բանկի կողմից թողարկված և սպասարկվող բանկային քարտ տնօրինելու իրավասություն:

«My Rewards միավորների կուտակում»՝ գործընթաց, որը հանգեցնում է AEB Rewards հաշվին My Rewards միավորների համալրմանը՝ Ծրագրով նախատեսված հիմքերով և կարգով: Ընդ որում, կից/լրացուցիչ քարտերի միջոցով կատարված գործարքների դիմաց My Rewards միավորների հաշվեգրումը կատարվում է հիմնական Քարտի Քարտապան հանդիսացող Մասնակցի AEB Rewards հաշվին:

«My Rewards միավորների նվազեցում»՝ գործընթաց, որի արդյունքում AEB Rewards հաշվից կուտակված My Reward միավորների քանակը կրճատվում է Ծրագրով նախատեսված հիմքերով և կարգով:

«AEB Mobile»/«AEB Online» համակարգեր՝ Բանկի էլեկտրոնային հարթակներ, որում գրանցված Քարտապանը հնարավորություն է ունենում իրականացնել համակարգով թույլատրվող գործառնություններ:

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Ծրագիրը Բանկի հաճախորդին ուղղված հրապարակային առաջարկ է:

1.2 Սույն դրույթներով սահմանվում են Ծրագրին մասնակցության կարգը, Մասնակցի համար My Rewards միավորների կուտակման և/կամ նվազեցման, ինչպես նաև Ծրագրի այլ պայմանները:

1.3 Ծրագիրը կոչված է բարձրացնելու հաճախորդի հետ շարունակական հարաբերությունների մակարդակը՝ Բանկի պրոդուկտներից օգտվելիս, խրախուսելով հաճախորդին կատարել ավելի շատ անկանխիկ գործարքներ՝ օգտագործելով Քարտը ամենօրյա վճարումներում կատարելիս:

1.4 Ծրագրի շրջանակներում Մասնակիցը կարող է ստանալ շուրջօրյա աջակցություն՝ 86 86 կամ +374-8000-8686 հեռախոսահամարներով:

2. Ծրագրում մասնակցության կարգը

2.1 Սույն դրույթներով սահմանված չափանիշներին համապատասխանող Քարտապանը դառնում է Ծրագրի մասնակից «AEB Mobile»/«AEB Online» համակարգերում նախատեսված կարգով համաձայնություն տալով Ծրագրին:

2.2 Ծրագրին համաձայնություն տալով՝ Մասնակիցը ընդունում է Ծրագրին մասնակցության պայմանները և պահանջները, ներառյալ Ծրագրում հետագայում Բանկի կողմից միակողմանի կատարվող դրույթների փոփոխությունները:

2.3 Ծրագրի գործողությունը 5 (հինգ) տարի է: Ծրագրի գործողության ժամկետը կարող է միակողմանի երկարաձգվել Բանկի կողմից:

2.4 Ծրագրի պայմանները և դրույթները Մասնակիցը ընդունում է Ծրագրի ամբողջ ժամկետի համար:

2.5 Բանկն իրավունք ունի մերժել (դադարեցնել) Քարտապանի մասնակցությունը Ծրագրում, միակողմանի հրաժարվել My Rewards միավորների հաշվեգրումից, զրոյացնել արդեն իսկ հաշվեգրված My Rewards միավորները Ծրագրով սահմանված դեպքերում: Բանկը մասնակիցների ցանկում չի ներառում, ինչպես նաև իրավունք ունի միակողմանի մասնակիցների ցանկից բացառել այն անձանց, որոնց գործարքները (վարքագիծը) Բանկի կողմից դասակարգվում են կասկածելի:

2.6 Այն Հաճախորդը, ով, համապատասխանում է սահմանված չափանիշներին, սակայն չունի Ծրագրին հասանելիություն, և շահագրգռված է Ծրագրում իր մասնակցությամբ, կարող է Ծրագրի գործողության ժամկետի ընթացքում դիմել Բանկին՝ Ծրագրին մասնակից դարձնելու համար:

3. My Rewards միավորների կուտակում

3.1 Բանկը կարող է հաշվեգրել My Rewards միավորներ քարտային անկանխիկ գործարքների դիմաց, ըստ քարտատեսակի, գործարքի MCC (Merchant Category Code) կոդի, գործարքի տեսակի և իրականացման վայրի (տեղական կամ միջազգային)՝ համաձայն Բանկի կողմից հաստատված դրույքների: My Rewards միավորներ հաշվարկելիս անկանխիկ քարտային գործարքի գումարը բազմապատկվում է տվյալ գործարքի տեսակի համար նախատեսված տոկոսային արտահայտությամբ համապատասխան գործակցով համաձայն սույն Ծրագրի թիվ 1 Հավելվածի:

3.2 Բանկը կարող է իրականացնել Ծրագրի Մասնակիցների համար ակցիաներ կամ հատուկ առաջարկներ, որոնց շրջանակներում Մասնակցի AEB Rewards հաշվին կարող են հաշվեգրվել լրացուցիչ My Rewards միավորներ՝ համաձայն տվյալ ակցիայի պայմանների: Ծրագրի շրջանակներում անցկացվող յուրաքանչյուր ակցիայի պայմանները հանդիսանում եմ Ծրագրի անբաժանելի մաս:

3.3 My Rewards 1 միավորը = 1 ՀՀ դրամ, որը չի ներառում հարկերը:

3.4 Արտարժութային գործարքների գծով հաշվարկների համար հիմք է ընդունվում գործարքը Բանկում փաստացի հաշվեգրման (ձևակերպման) օրվա դրությամբ վճարային համակարգերի հետ փոխհաշվարկների համար հիմք հանդիսացող արժույթի ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը:

3.5 My Rewards միավորերի վերաբերյալ տեղեկատվությունը հաճախորդին ներկայացվում է «AEB Mobile»/«AEB Online» համակարգերում:

4. My Rewards միավորների նվազեցումը (օգտագործումը)

4.1 My Rewards միավորները փոխանցելի չեն և չեն կարող համակցվել այլ հաշիվներից ստացված միավորների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա ուղղակիորեն թույլատրված է Բանկի կողմից:

4.2 Կուտակված միավորները կարող են փոխարինվել.

4.2.1 Ծրագրին գործակցող կազմակերպությունների հետևյալ պարգևներով.

- Հյուրանոցային ամրագրումներ,
- Չվերթերի ամրագրումներ,

4.2.2 Միավորների փոխարկում դրամական միջոցների,

4.2.3 Միավորների միջոցով անկանխիկ վճարումների դիմաց փոխհատուցում,

4.2.4 Ծրագրում հասանելի այլ վճարումներ:

4.3 Կուտակված միավորների փոխարինման համար Հաճախորդը վճարում է 3% միջնորդավճարը:

5. My Rewards միավորների կուտակման, վճարման և չեղարկման պայմանները

5.1 My Rewards միավորները հաշվարկվում են Բանկի կողմից գործարքները մշակումից և հաշվանցումից հետո՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, և օգտագործման համար հասանելի են դառնում My Rewards հաշվում միավորների համալրման պահից սկսած:

5.2 Քարտի փակման դեպքում My Rewards միավորները չեն չեղարկվում և շարունակում են հաշվառվել AEB Rewards հաշվում:

5.3 Մասնակիցը իրավունք ունի ներկայացնել Բանկին հարցում, դիմում, բողոք եթե համաձայն չէ My Rewards միավորների հաշվարկի, հաշվեգրման, դուրսգրման կամ չեղարկման հետ նշելով անհամաձայնության հիմքերը, որին Բանկը պատասխանում է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Քարտապանի գործարքի վերադարձի/չեղարկման դեպքում՝ My Rewards միավորների գումարը ընթացիկ և հետագա հաշվարկային ժամանակաշրջաններում կրճատվում է տվյալ գործարքի համար հաշվեգրված և My Rewards հաշվին համալրված գումարի չափով:

5.5 Միավորները կարող են ունենալ վավերականության ժամկետ, որի դեպքում Մասնակիցները կարող են օգտագործել My Rewards միավորները մինչև վավերականության ժամկետի ավարտը: My Rewards միավորների վավերականության ժամկետի վերաբերյալ տեղեկությունը ներկայացվում է My Rewards միավորների հետ միասին:

5.6 Բանկն իրավունք ունի չեղյալ հայտարարել Մասնակցի My Rewards միավորները և դադարեցնել մասնակցությունը Ծրագրին (որի մասին Բանկը ծանուցում է Քարտապանին 3/երեք/ աշխատանքային օրվա ընթացքում), հետևյալ դեպքերում.

5.6.1 Մասնակցի կողմից խախտվել են կամ չեն կատարվել Ծրագրի պայմանները.

5.6.2 Մասնակիցը չարաշահել է My Rewards միավորներ ստանալու իրավունքը, ինչը Բանկը գնահատում է միակողմանի:

6. Ծրագրին մասնակցելու պայմանները

6.1 Ծրագրին մասնակցելով Քարտապանը համաձայնություն է տալիս նաև հետևյալին.

6.1.1 Հաճախորդը ընդունում է Ծրագրի պայմանները մինչև Ծրագրի գործողության ժամկետի ավարտը:

6.1.2 Հաճախորդը Ծրագրից հրաժարվելու համար ներկայացնում է Բանկին գրավոր դիմում, որի հիմքով Բանկը դադարեցնում է հաճախորդի մասնակցությունը Ծրագրին ծանուցելով դրա մասին հաճախորդին 3 (երեք) բանկային օրվա ընթացքում:

6.1.3 Բանկը պատասխանատու է Քարտապանի գործարքների իրականացման դեպքում՝ Ծրագրին համապատասխան My Rewards միավորների հաշվեգրման և դրանից բխող հարկային պարտավորությունների կատարումը ապահովելու համար:

6.1.4 Ծրագրի իրականացման հետ կապված Մասնակցի կրած կորուստները, կատարած վճարումները և այլ ծախսերը Բանկի կողմից փոխհատուցման ենթակա չեն:

6.1.5 Բանկը պատասխանատվություն չի կրում առևտրի և սպասարկման կետերում և/կամ դրան սպասարկող Բանկի կողմից գործարքի վերաբերյալ սխալ տեղեկատվության ստացման արդյունքում My Rewards միավորների սխալ հաշվեգրման դեպքերում:

6.1.6 Բանկն իրավունք ունի միակողմանի Ծրագրում կատարել փոփոխություններ և/կամ լրացումներ, որոնք ուժի մեջ մտնելուց յոթ աշխատանքային օր առաջ Բանկը կհրապարակի դրանք Բանկի ինտերնետային կայքի՝ www.aeb.am հասցեում:

6.1.7 Հաճախորդը համաձայն է Բանկից ստանալ Ծրագրի կատարման հետ կապված մարքեթինգային առաջարկներ, գովազդներ և/կամ տեղեկատվական այլ նյութեր:

6.1.8 Մասնակիցը ընդունում է Ծրագրով սահմանված բոլոր պայմանները և պահանջները:

7. Գաղտնիության քաղաքականություն

7.1 Ծրագրին մասնակցելով Քարտապանը համաձայնություն է տալիս հետևյալին.

7.1.1 Բանկի կողմից մշակվեն Հաճախորդի անձնական տվյալները, որոնցում կարող են ներառվել Հաճախորդի անուն, ազգանուն, հայրանուն, սեռ, ծննդյան տվյալներ, անձը հաստատող փաստաթղթի և էլ.փոստի տվյալներ, բնակության, հաշվառման հասցեի տվյալներ, քաղաքացիություն, զբաղվածություն, աշխատանքի և եկամուտների, գործատուի վերաբերյալ տվյալներ, կրթության, ընտանեկան կարգավիճակի տվյալներ, աշխատանքային, բնակության և բջջային հեռախոսահամարներ, ռեզիդենտության կարգավիճակի տվյալներ, հաճախորդի վարկային պարտավորությունների, բանկային ավանդների, հաշիվների և/կամ այլ գույքի տվյալներ:

7.1.2 Բանկի կողմից երրորդ անձանց բացահայտվեն /տրամադրվեն/ Հաճախորդի անձնական տվյալները, Հաճախորդի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, այսուհետ՝ Գաղտնի տեղեկություն, հետևյալ դեպքերում.

7.1.2.1 Գաղտնի տեղեկությունը երրորդ անձին բացահատվել է Ծրագրի իրագործման նպատակով,

7.1.2.2 Գաղտնի տեղեկությունը երրորդ անձին տրամադրվել է Բանկի ծառայությունները հաճախորդին մատուցելու նպատակով,

7.1.2.3 Գաղտնի տեղեկությունը երրորդ անձին տրամադրելու պահանջը նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ,

7.1.2.4 Գաղտնի տեղեկությունը սույն մասով չսահմանված այլ նպատակով երրորդ անձին տրամադրելու համար Հաճախորդը տվել է համաձայնություն:

7.2 Բանկը Մասնակիցների տեղեկատվությունը օգտագործում է հետևյալ նպատակների համար.

7.2.1 Համակարգել և կառավարել ծրագրի գործառնությունը,

7.2.2 My Rewards միավորների ու պարգևների հաշվեգրման, հաշվանցման և վերահսկման,

7.2.3 Հաղորդակցման, ներառյալ ծրագրային թարմացումները, բողոքները և առաջարկությունները:

7.3 Հաճախորդը պարտավոր է Բանկին տրամադրել Հաճախորդի անձնական տվյալների վերաբերյալ ամբողջական, ճշգրիտ և արժանահավատ տեղեկատվություն, ինչպես նաև կտրամադրի դրանց փոփոխությունների մասին տեղեկատվությունը՝ դրանք տեղի ունենալուց հետո 3 (երեք) բանկային օրվա ընթացքում, սխալ տեղեկությունների տրամադրման մասին իրեն հայտնի դառնալուց հետո էլ անհապաղ կներկայացնի Բանկին ճշգրիտ տեղեկատվությունը և հիմքերը, որոնք չկատարելու բացասական հետևանքների պատասխանատվությունը կրելու է հաճախորդը:

7.4 Բանկը պարտավոր է ձեռնարկել անվտանգության հնարավոր միջոցներ՝ պաշտպանելու Մասնակցի անձնական տվյալները չարտոնված մուտքից, բացահայտումից, փոփոխությունից և ոչնչացումից:

7.5 Ծրագրի պայմաններին համապատասխան Բանկի կողմից Գաղտնի տեղեկությունը երրորդ անձանց բացահայտելու դեպքում՝ Բանկը կրում է պարտականություն նախազգուշացնելու երրորդ անձին, որ վերջինս կրում է Գաղտնի տեղեկությունը ստանալու դեպքում այն չհրապարակելու պարտականություն, ինչպես նաև այդ պարտականության չկատարման հետևանքով Քարտապանին/Բանկին/ պատճառված վնասների ամբողջությամբ հատուցման պատասխանատվությունը:

7.6 Բանկը ժամանակ առ ժամանակ կարող է թարմացնել Ծրագրի Գաղտնիության քաղաքականությունը: Որի վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի Բանկի ինտերնետային կայքի՝ www.aeb.am հասցեում:

8. Այլ դրույթներ

8.1 My Rewards միավորների հաշվարկման, հաշվեգրման և օգտագործման հետ կապված բոլոր վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Բանկի և Մասնակցի միջև բանակցությունների միջոցով՝ բարի կամքի և փոխըմբռնման հիման վրա: Համաձայնության բացակայության դեպքում վեճը ենթակա է լուծման ՀՀ օրենսդրության համաձայն:

Հավելված 1

1. Բանկը հաշվեգրում է My Rewards միավորներ քարտային անկանխիկ գործարքների դիմաց հետևյալ քարտատեսակների գծով.
   - ArCa Classic, VISA Classic (այդ թվում Digital), Mastercard Standart (այդ թվում Digital),
   - Mastercard Gold, VISA Gold,
   - VISA Platinum (այդ թվում՝ կիսամետաղական),
   - VISA Infinite (այդ թվում՝ կիսամետաղական)

2. Քարտային անկանխիկ գործարքների դիմաց կիրառվող գործակիցներ.

2.1 Գործարք ՀՀ տարածքում			
Խումբ	MCC կոդ	MCC ոլորտ	Գործակից
1	5811	առաքման ծառայություններ	0.04%
2	4722, 4511, 5814	տուրիստական գործակալությունների ծառայություն, ավիատոմսերի վաճառք, արագ սննդի օբյեկտներ/ինքնասպասարկում	0.07%
3	4112, 4789, 4121, 5172, 5542, 5511, 5541, 7538, 5732, 5722	երկաթուղային տոմսերի վաճառք, քաղաքային և միջքաղաքային տրանսպորտ, տաքսի ծառայություն, վառելիքի վաճառք, բենզալցակայաններ, գազալցակայաններ, ավտոմեքենաների վաճառք, ավտոմեքենաների տեխսպասարկում, կենցաղային տեխնիկայի վաճառքի խոշոր ցանցեր/կետեր	0.10%
4	5411, 5812, 3501-3828, 7011, 7997, 3351, 3441, 7512, 5944, 5094, 7631	սուպերմարկետներ, ռեստորաններ, հյուրանոցներ, սպորտային ակուբներ, ավտոմեքենաների վարձույթ, Ոսկերչական իրեր, թանկարժեք քարեր, ժամացույցներ	0.15%
5	6010, 6011, 6012, 4814, 4900, 6050, 6300, 6051, 6540, 7801, 7995, 9399, 9311, 8398	Կանխիկացում ATM, POS, հեռահաղորդակցման ծառայություններ (հեռախոս, ինտերնետ, tv), Կազինո և շահումով խաղեր, խաղադրույքներ, պետական մարմինների ծառայությունների դիմաց վճարներ, տուգանքներ, օրենքով պարտադրված վճարներ, մուծումներ, Բարեգործական հանգանակություններ, Պետական և տեղական բյուջե ուղղված հարկերի և տուրքերի վճարներ	0.00%
6	1-5 խմբերի մեջ չընդգրկված MCC-ները	Այլ ապրանքների և ծառայությունների վաճառք	0.12%

2.2 Միջազգային գործարք			
Խումբ	MCC կոդ	MCC ոլորտ	Գործակից
1	6010, 6011, 6012, 4814, 4900, 6050, 6300, 6051, 6540, 7801, 7995, 9399, 9311, 8398	Կանխիկացում ATM, POS, հեռահաղորդակցման ծառայություններ (հեռախոս, ինտերնետ, tv), Կազինո և շահումով խաղեր, խաղադրույքներ, պետական մարմինների ծառայությունների դիմաց վճարներ, տուգանքներ, օրենքով պարտադրված վճարներ, մուծումներ, Բարեգործական հանգանակություններ, Պետական և տեղական բյուջե ուղղված հարկերի և տուրքերի վճարներ	0.00%
2	1-ին խմբի մեջ չընդգրկված MCC-ները	Այլ	0.20%